ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 329 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N 650-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 650-Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությանն ամրացված՝ Երևան քաղաքի Արցախի փողոցի 8/16 հասցեում գտնվող՝ 899.7 քառ. մետր մակերեսով վարչական շենքը, 53.1 քառ. մետր մակերեսով ենթակայանը, 25 քառ. մետր մակերեսով ծածկը, 0.16383 հեկտար մակերեսով հողամասը, ինչպես նաև ինքնակամ կառուցված 67.6 քառ. մետր մակերեսով վարչական շենքը և 27.0 քառ. մետր մակերեսով պարիսպը (անշարժ գույքի նկատմամբ

իրավունքների պետական գրանցման թիվ 10012025-01-0082 վկայական, գրանցված՝ 2012 թվականի մարտի 29-ին) հետ վերցնել և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել կազմակերպությանը:».

2) որոշման 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել որոշման 6-րդ կետում նշված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ